ԲԱՔՎԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ՝ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆ (1918 թ. մայիս - 1920 թ. մայիս)

ՂՈՒԼՅԱՆ ՅՈՒ. Վ.

Բաքվի Հայոց ազգային խորհուրդը (ՀԱԽ) իրավամբ ոչ միայն Բաքվի, այլև Ադրբեջանի հայության պաշտպան մարմինն էր: Ստեղծվել էր 1917 թ. վերջերին: Այն կարևոր դեր էր խաղում Ադրբեջանի հայության հասարակական-քաղաքական կյանքում. իրականացնում էր պետական, քաղաքական գործառույթներ: Անդրկովկասյան հատուկ կոմիտեն, Անդրկովկասյան սեյմը, ապա Բաքվի կոմունայի ղեկավարությունը Ադրբեջանի հայությանը վերաբերող բոլոր հարցերը լուծում էին ՀԱԽ-ի միջոցով ու համաձայնությամբ: Խորհուրդը Շամախու, Գյոգչայի, Նուխիի, Արեշի շրջաններում մասնաճյուղեր (գյուղացիական, գավառական կոմիտեներ) ուներ, որոնք լուծում էին տեղական խնդիրներ: ՀԱԽ-ի ընդհանուր ժողովում ընտրվում էր խորհրդի վարչություն, որը և իր կազմից ընտրում էր նախագահ: 1917-ի վերջերից մինչև 1918-ի ապրիլ Ազգային խորհուրդն իր տրամադրության տակ ուներ զորամիավորումներ, որոնք մեծ մասամբ բաղկացած էին ռուսական բանակի հայազգի կադրային սպաներից ու զինվորներից: 1918 թ. այդ զորամիավորումներն անցան Բաքվի կոմունայի ենթակայության տակ ու կոմունայի բանակի կազմում վճռորոշ դեր խաղացին թուրքական արշավանքին դիմագրավելու գործում:

ՀԱԽ-ի նախագահը սկզբնական շրջանում Տ. Հովհաննիսյանն էր[1], որին հաջորդեց ՀՅԴ հայտնի գործիչներից մեկը՝ Աբրահամ Գյուլխանդանյանը: 1918 թ. ամռանը թուրքական առաջխաղացումը կասեցնելու համար կամավորական ջոկատներ և Հայկական առանձին կորպուսի զորամասեր կազմակերպելու նպատակով տարբեր ռազմաճակատներ և հայաբնակ խոշոր բնակավայրեր գործուղվեցին ՀԱԽ-ի լիազորները: Բաքու գործուղվեց Համազասպը, որին կարճ ժամանակում հաջողվեց ձևավորել կամավորական գումարտակ և 2-րդ հայկական պահեստային գունդը: Նրան մեծ օգնություն էր ցույց տալիս ՀԱԽ-ը: Այն բաղկացած էր 70 հոգուց, որի գործադիր մարմնի մեջ էին մտնում տարբեր կուսակցությունների ներկայացուցիչներ (նախագահ՝ Ա.Գյուլխանդանյան, քարտուղար՝ Չիլինգարյան): Զինվորական խորհուրդը ղեկավարում էր բժշկապետ Թադևոս Զաքարյանը, զինվորական շտաբը՝ Խանասորի հերոս Վարդանը:

---

[1] *Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ե., 2009, էջ 114:*

ՀԱԽ-ը աշխատանք էր տանում նաև գերմանական ու ավստրո-հունգարական ռազմաճակատներից գորացրված հայ զինվորներին ազգային բանակ գորակոչելու ուղղությամբ[2]: Մինչև թուրքերի կողմից Բաքվի գրավումը (15.IX.1918) հայության գաղթը կազմակերպելու գործում մեծ ջանք գործադրեց ՀԱԽ-ը՝ նախագահ Ա. Գյուլխանդանյանի ղեկավարությամբ, որը գաղթողներին օգնելու և առաջացող խնդիրները տեղում լուծելու համար մարդիկ ուղարկեց քաղաքի հայկական թաղամասեր[3]:

Բաքվի գրավումից հետո ՀԱԽ-ի գործունեությունը դադարեցվեց: Ազգային-հասարակական գործերին մասնակցելու իրավունքից զուրկ լինելը Բաքվի հայությանը մտահոգող հիմնական խնդիրներից էր, մինչդեռ այնտեղ ապրող մյուս ազգություններին իրավունք էր տրվում ունենալու իրենց խորհուրդները[4]: «Հայերին արգելվում է անգամ ունենալ բարեգործական ֆունկցիաներով օրգան, չնայած նրանք ավելի, քան մյուս ազգությունները կենսականորեն հետաքրքրված էին այդ օրերը ունենալ հատուկ հասարակական օրգաններ՝ մասսայական դժբախտությունների դեմ պայքարելու համար, օգնելու սովյալ ընտանիքներին, ճակատագրին թողնվածների որբերին»[5], - ասված էր Բաքվի հոգևոր առաջնորդ Բագրատ եպիսկոպոսի՝ Ադրբեջանի նախարար-նախագահին ուղղված հաշվետու գրության մեջ: Հոգևոր առաջնորդը նրան խնդրում էր ուշադրության արժանացնել շոշափված հիմնախնդիրները:

ՀԱԽ-ի լուծարվելու պատճառով հայ հիվանդները, վիրավորները, չքավորները մնացել էին առանց խնամքի, քանի որ նրանց օգնող կազմակերպության գործունեությունը կասեցվել էր Ադրբեջանի կառավարության կողմից[6]:

1918 թ. նոյեմբերի 17-ին անգլիական զորքի՝ Բաքու մտնելուց հետո Հայոց ազգային խորհուրդը, վերսկսելով իր գործունեությունը, ձեռնամուխ եղավ նախկին գործառույթների իրականացմանը: Նրա իրավասության ներքո էին եկեղեցին ու Մարդասիրական ընկերությունը, նրան էին ականջալուր լինում հայ գործարարներն ու մտավորականության ներկայացուցիչները, բոլոր նրանք, ովքեր ներքաշված չէին դասակարգային կամ քաղաքական պայքարի մեջ: Այդ ժամանակ ՀԱԽ-ի պատվավոր նախագահն էր Շամախու և Բաքվի թեմի առաջնորդ Բագրատ եպիսկոպոս Վարդազարյանը, նախագահը՝ նավթարդյունաբերողների եղբայր Հակոբ Ղուկասյանը, հետո նախագահ դարձավ Արշակ Պարոնյանը, այնուհետև՝ Աբրահամ Դաստակյանը, խորհրդի գործերի կառավարիչը՝ փաստաբան Հակոբ Մանանդյանն էր, քարտուղարը՝ Բախշի Իշխանյանը:

---

[2] **Ավետիսյան Հ.,** Հայկական հարցը 1918 թվականին, Ե., 1997, էջ 163:

[3] Ռոստոմ (մահվան վաթսուն ամյակի առթիվ), Բեյրութ, 1979, էջ 679:

[4] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ) ֆ.276, ց.1, գ.13, թ.5:

[5] Նույն տեղում, ֆ.223, ց.1, գ.5, թթ. 1-2:

[6] Նույն տեղում, ֆ.276, ց.1, գ.13, թ.5:

Վերսկսելով իր գործունեությունը՝ Խորհուրդը ջանում էր թեթևացնել Բաքվի հայերի աղետալի վիճակը, փախստականներին վերադարձնել իրենց բնակավայրերը, փրկել հայ ռազմագերիներին ու պատանդներին, դրամական միջոցներ հայթայթել հիվանդներին, որբերին, վիրավորներին խնամելու նպատակով, նաև դիմումներ էր հղում հասարակական, պետական, զինվորական մարմիններին՝ միաժամանակ մեծ աշխատանք ծավալելով հայ գաղթականներին Բաքվում և Ադրբեջանի հայաբնակ գավառներում տեղավորելու, նրանց նյութական, բժշկական և այլ տեսակի օգնություն կազմակերպելու գործում[7]: Ադրբեջանի կառավարության հետ Ազգային խորհրդի վարած բանակցությունների շնորհիվ ճանապարհային նախարարությունը համաձայնել էր հայ գաղթականներին առանց խոչընդոտներ հարուցելու անվճար տեղափոխել երկաթգծով[8]:

ՀԱԽ-ի ամբողջ գործունեությունը, կառավարության և խոր-հրդարանի անդամներ նշանակելու նրա իրավասությունը, Ադրբեջանի հայության տնտեսական, մշակութային ու քաղաքական հաստատությունները ղեկավարելու լիազորությունները վկայում են, որ 1918թ. Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությունն ստեղծվել էր պետական իշխանության մարմիններ ունեցող երկու ժողովուրդների՝ հայերի ու թուրք-թաթարների համաձայնության հիման վրա: Դա էր պատճառը, որ ՀԱԽ-ը որոշում կայացրեց Ադրբեջանի պառլամենտ ու կառավարություն մտնել՝ միայն նախօրոք առաջադրելով Ղարաբաղի հարցը[9]:

Նրա մտահոգություններից մեկն էլ Բաքվի անկումից առաջ և հետո հայության «դավաճանության» մասին տարածված կարծիքը հերքելն էր: Այդ նպատակով Բաքվում գտնվող դաշնակից երկրների դեսպանների միջոցով նրանց կառավարություններին ՀԱԽ-ի կողմից համապատասխան դիմումներ արվեցին, միաժամանակ, անգլիական, ֆրանսիական ու ամերիկյան դեսպաններին հուշագրեր հանձնվեցին Բաքվի դեպքերի վերաբերյալ[10]:

Թեև ՀԱԽ-ը զրկված էր հայերի նկատմամբ Ադրբեջանի կառավարության քաղաքականության վրա ազդելու իրական հնարավորություններից, սակայն հայության խնդիրները արծարծում էր այդ պետության ղեկավարների հետ հանդիպումների ընթացքում: Նա, դարաբաղյան իրադարձություններից ելնելով, հաճախ էր դիմումներ հղում դաշնակիցների հրամանատարությանը, որպեսզի վերջինս մինչև Փարիզի խաղաղության կոնֆերանսը իր զինված ուժերով ստատուս քվո ապահովեր Արցախում:

---

[7] Նույն տեղում, ֆ. 223, ց. 1, գ. 44, թ. 47:

[8] Նույն տեղում, թ.13:

[9] Յառաջ, 17.I.1919:

[10] Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում, 1918-1920 թթ., փաստաթղթերի ու նյութերի ժողովածու, Ե., 2003, էջ 186:

Թե՛ Ադրբեջանի կառավարության և թե՛ անգլիական հրամանատարության հետ ունեցած բանակցությունների ընթացքում ՀԱԽ-ը միշտ նախապայման էր դնում Արցախի հարցը: Թե՛ գեներալ Թոմսոնը և թե՛ Ադրբեջանի Հանրապետության մինիստր-նախագահ Խան-Խոյսկին հանդիսավոր կերպով խոստանում էին Արցախի նկատմամբ հարձակողական քայլեր չկատարել: Այսպես, 1919 թ. ապրիլի վերջին, երբ Ուսուբբեկովի գլխավորած Ադրբեջանի կառավարության նոր դահլիճը կառավարության հռչակագրով Արցախը հայտարարեց Ադրբեջանի սեփականություն, Ազգային խորհրդի հրահանգով հայ նախարարները պահանջեցին հռչակագրից հանել այդ կետը, հակառակ դեպքում իրենք հրաժարական կտան: Ադրբեջանի կառավարությունը նահանջեց և վերացրեց այդ կետը: Գիտակցելով, որ Արցախի հարցի լուծումը դուրս է իր իրավասության սահմաններից՝ ՀԱԽ-ը մշտապես պաշտպանում էր Ադրբեջանի տարածքում ապրող հայության շահերը: Չկարողանալով գործուն կերպով միջամտել Ղարաբաղի հայության քաղաքական որևէ որոշում ընդունելու հարցում՝ Խորհուրդը այնուամենայնիվ, ՀՀ կառավարությանը իրազեկում էր Ղարաբաղում տիրող ծանր իրավիճակի մասին և առաջարկում ձեռնարկել շուտափույթ և վճռական միջոցներ ապագա վտանգավոր բարդություններից խուսափելու համար: «Դժբախտաբար պայմաններն այնպես էին դասավորվել, որ Բաքվի Ազգային խորհուրդը Հայաստանի կառավարությունից կոնկրետ ցուցումներ ու հրահանգներ չէր ստանում այս կամ այն դիրքը բռնելու և այս կամ այն քայլերը կատարելու համար: Այդ իսկ պատճառով էլ Ազգային խորհուրդը միշտ էլ խուսափել է իր իրավասության սահմաններից դուրս որևէ ակտիվ գոր-ծունեությունից և բավարարվել է միայն պասիվ վերաբերմունքով, որը ոչ մի դեպքում չի շոշափել հայ բնակչության կենսական շահերը և Արցախի խնդրում երբեք չի վնասել Հայաստանի կառավարության քաղաքական ձգտումներին»[11], - իրավացիորեն նշում է Հ. Աբրահամյանը:Ի դեպ, ստեղծված իրավիճակում, երբ Ղարաբաղը, զրկված դրսի օգնությունից, ենթակա էր նոր կոտորածների, ՀԱԽ-ը 1919 թ. հունիսի 10-ին նիստ է գումարում՝ որոշելով Հայաստանի կառավարությանը մանրամասն տեղեկություններ հաղորդելու նպատակով պատգամավորներ ուղարկել և առաջարկել խնդիրը կարգավորելու համար որոշ համաձայնության գալ Ադրբեջանի հետ. «Որոշ զիջումներ անելով Ազերբայջանին՝ խաղաղ լուծում տալ Ղարաբաղի հարցին և խնդրել հայկական կառավարությանը, որ նա շտապի այդ ուղղությամբ բոլոր հնարավոր միջոցները գործադրել՝ ապագա տխուր անակնկալները կանխելու համար»[12]:

Ղարաբաղի հայությունն էլ, իր հերթին տեղի իրավիճակի մասին պարբերաբար տեղեկացնում էր Բաքվի Հայոց ազգային խորհրդին: Նամակներ էին ստացվում Դիզակի, Վարանդայի, Խաչենի, Ջիվանշիրի և

---

[11] **Աբրահամյան Հր.,** *Արցախյան գոյամարտ, Ե., 1991, էջ 107:*

[12] *Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում, էջ 360:*

Շուշիի ներկայացուցիչներից՝ Ղարաբաղում անգլիական հրամանատարության քաղաքականության և Ղարաբաղի՝ Ադրբեջանին չենթարկվելու վճռականության մասին[13]:

Շուշիից և Զանգեզուրից հաճախակի պատվիրակություններ էին գալիս Բաքու և իրենց գրավոր կամ բանավոր զեկուցագրերով նկարագրում տագնապ հարուցող իրադարձությունները: ՀԱԽ-ը ոչ միայն խուսափում էր իր կամքն ու ցանկությունը Արցախի հայությանը թելադրելուց, այլև հնարավոր բոլոր միջոցներով աջակցում էր նրան. «Առաջին անգամ ՀՀ Դաշնակցության Բաքվի Կենտրոնական կոմիտեն Արցախ է փոխադրել չորս հարյուր հազար (400.000) ռուբլի, երկրորդ անգամ Բաքվի Ազգային խորհրդի միջոցով Արցախի Ազգային խորհրդին ուղարկվել է հինգ հարյուր հազար (500.000) ռուբլի, իսկ երրորդ անգամ՝ հարյուր վաթսուն հազար (160.000) ռուբլի: Բայց դրանք կաթիլներ էին ծով կարիքների դիմաց: Բաքվի խորհուրդը ինքը ևս, լինելով ծանրաբեռնված և բազմաթիվ անհետաձգելի կարիքների մեջ, դժբախտաբար չի կարողանում Արցախի համար իր չափազանց սուղ միջոցներից անել ավելին, քան արել է»[14]:

Մեծ միջոցներ էին անհրաժեշտ հատկապես հայկական որբանոցներն ու հիվանդանոցները պահելու և չքավոր ընտանիքներին պարենով ապահովելու համար: «Օրական 50000 ռուբլու ծախքեր են լինում: Այժմ սպառվել են մեր բոլոր ֆինանսները: Երկու շաբաթ է արդեն, ինչ նախահաշիվ ենք ներկայացրել անգլիացիներին: Խնդրել ենք նպաստ՝ 6 մլն. ռուբլի միանվագ, 3-4 մլն. ռուբլի ամսական: Առայժմ չունենք ոչ մի պատասխան»[15], - ասված էր ՀԱԽ-ի նախագահի՝ ՀՀ վարչապետին հասցեագրած զեկուցագրում (29.I.1919):

Նյութական միջոցների բացակայության պատճառով ՀԱԽ-ը հնարավորություն չուներ նյութական օգնություն տրամադրելու գավառահայությանը, որտեղից պարբերաբար դիմումներ էին ստաց-վում ֆինանսական օգնության խնդրանքով: Խորհուրդը հաճախ ստիպված էր մերժել այդ դիմումների մի մասը: Մասնավորապես, նա նման որոշում կայացրեց Ղարաբաղի հայոց ժողովրդական խորհրդի՝ ֆինանսական օգնություն տրամադրելու վերաբերյալ 1919 թ. հունվարի 14-ի գրության առիթով[16]:

1919 թ. ապրիլի դրությամբ Խորհուրդն իրականացնում էր որբանոցներին ու հիվանդանոցներին, փախստականներին ու գերու-թյունից վերադարձածներին օգնելու, ծայրահեղ չքավորության մեջ տառապող ընտանիքներին նպաստ կամ սնունդ տրամադրելու գործը: ՀԱԽ-ը զուրկ էր եկամտի մշտական ու կանոնավոր աղբյուրներից, մինչդեռ նրա

---

[13] ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 75, թ. 5:

[14] **Աբրահամյան Հր.,** *նշվ. աշխ., էջ 107:*

[15] *Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում, էջ 203:*

[16] ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 65, թ. 21:

առաքելության համար անհրաժեշտ էր պետական օժանդակություն, որ կարող էր տրամադրել ՀՀ կառավարությունը: Սակայն նկատի ունենալով Հայաստանի անհամար կարիքներն ու սահմանափակ հնարավորությունները՝ ՀԱԽ-ը խուսափում էր նրանից ֆինանսական օգնություն խնդրելուց: Դաշնակիցների ժամանումով հույս առաջացավ, որ օգնության գործը կստանձնի անգլիական հրամանատարությունը, սակայն դա տեղի չունեցավ, թեև նրա առաջարկով կազմված նախահաշիվը ուղարկվել էր Լոնդոն, բայց այդպես էլ պատասխան չեղավ: Իրավիճակը մասամբ թեթևացավ, երբ որբանոցներն ու սննդատու կայանն ան-ցան ամերիկյան առաքելության ձեռքը: «Բայց խորհրդիս ծախքերով պահվում է երեխայոց հիվանդանոցը՝ մոտ 220 մահճակալով: Խորհրդիս վրա է ծանրանալու նաև Հյուսիսային Կովկասից վերադարձող տասնյակ հազարավոր գաղթականության առաջին օգնության և Հայաստան ճանապարհելու հոգսը, որ պահանջում է դրամական խոշոր միջոցներ: Շամախու, Գյոգչայի, Արեշի ու Նուխվա գավառների հայության ծայր աստիճան թշվառ մնացորդները դիմել են ու դիմում են անընդհատ խորհրդիս, սակայն մինչև այժմ խորհուրդս անկարող է եղել նյութական օգնություն հասցնելու նրանց. որովհետև իր միջոցները հազիվ կարողացել են բավարարել տեղական կարիքները»[17], - գրել էր ՀԱԽ-ը Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությանը հղած նամակում: Նկատի ունենալով այս ամենը և այն, որ ՀԱԽ-ը արդեն իսկ ուներ մոտ երկու միլիոն պարտք՝ Բաքվի Հայոց ազգային խորհուրդը, այնուամենայնիվ, դիմեց Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ հինգ միլիոն ռուբլու նպաստ բաց թողնելու խնդրանքով. «Այդ գումարը խորհուրդս կհամարե փոխարինաբար ստացված և ապագայում նպաստավոր պայմաններում կաշխատե հետզհետե վերադարձնել»[18]:

Ազգային խորհուրդը աշխատանքներ էր տանում նաև ադրբեջանցիների մոտ գտնվող հայ գերիներին վերադարձնելու ուղղությամբ: Բայց քանի որ առանց Ադրբեջանի իշխանությունների թույլտվության հնարավոր չէր որևէ քայլ անել, ուստի ՀԱԽ-ը բանակցությունների մեջ էր մտնում նրանց հետ: Մասնավորապես, ներքին գործերի նախարարի հետ բանակցություններ էին տարվում որպես պատվիրակներ Գանձակ երկու հայ բժիշկներ ուղարկելու շուրջ՝ տեղում հայ գերիներին օգնություն ցուցաբերելու ու նրանց Բաքու վերադարձնելու նպատակով: Խորհրդի 1918թ. դեկտեմբերի 25-ի նամակին պատասխանելով՝ Ադրբեջանի ՆԳ նախարարը տեղեկացրեց, որ հանձնարարել է բժիշկներ Ավետիս Այդինյանին ու Սաֆրազբեկյանին համապատասխան գրություններ տալու և նրանց անվտանգությունն ապահովելու վերաբերյալ[19]: Հայ գերիներին օգնություն ցուցաբերելու և

---

[17] *Նույն տեղում, գ. 81, թ. 15:*

[18] *Նույն տեղում:*

[19] *Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում, էջ 172:*

հանքերի նախկին ծառայողներ Շամիլ Հակոբյանցին և Անդրեյ Անդրեասյանին Բաքու վերադարձնելու համար Գանձակ ուղարկվեցին 2 ֆելդշեր ու 4 սանիտար[20]:

Խորհուրդը ուշադրությամբ հետևում էր Հայաստանում ու նրա շուրջ ծավալված իրադարձություններին, մասնավորապես Հայկական հարցի քննարկումներին՝ հույսեր կապելով Փարիզում հրավիրվելիք խաղաղության կոնֆերանսի աշխատանքների հետ, փորձում իր լավագույն ուժերն օգտագործել հայրենիքին օժանդակելու գործում: 1918 թ. դեկտեմբերի 11-ին հրավիրած նիստում ՀԱԽ-ը, քննարկելով Փարիզի կոնֆերանսում հայ պատգամավորության հարցը, որպես շրջահայաց ու փորձառու գործիչներ, առաջարկեց գեներալ, փորձագետ Հակոբ Բագրատունու և թարգմանիչ, հրա-պարակախոս, պետական-հասարակական գործիչ Հովհաննես Խան-Մասեհյանի թեկնածությունը: Խորհուրդն իր որոշման մասին դեկտեմբերի 13-ին հայտնեց ՀՀ վարչապետին[21]:

Մուսավաթական Ադրբեջանի նվաճողական քաղաքականության դեմ մղվող պայքարին զուգահեռ՝ Հայաստանը ձգտում էր դիվանագիտական ներկայացուցչություն հաստատել Բաքվում: Ամիսներ պահանջվեցին մինչև այդ հնարավոր եղավ իրագործել: Մինչ այդ, ինչպես նշեցինք, տեղի հայության խնդիրներով զբաղվում էր Բաքվի Հայոց ազգային խորհուրդը, որի հնարավորու-թյունները խիստ սահմանափակ էին:

1919 թ. փետրվարի երկրորդ կեսին Թիֆլիս ժամանած Ա. Դաստակյանը, որն Ադրբեջանի աշխատանքի նախարարն էր, հայտնեց, որ Ադրբեջանի կառավարությունը համաձայն է Տ. Բեկզադյանին ընդունել որպես ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ, և տեղեկացրեց, որ ՀԱԽ-ը միաձայն որոշում է կայացրել և խնդրել Բեկզադյանին ընդունել այդ պաշտոնը[22]: Տ. Բեկզադյանը տվեց իր համաձայնությունը:

Հայաստանը չուներ վառելիքի պաշարներ և մինչև դաշնա-կիցների մուտքը Անդրկովկաս այն ներկրում էր Ադրբեջանից Վրաստանի միջոցով: Անդրկովկասի զինագրավումով իրավիճակը ինչ-որ ձևով բարելավվեց, չնայած Ադրբեջանից վառելիքի ներմուծումը կանոնավորված չէր: Դա արվում էր մեծ մասամբ դաշնակիցների, տարբեր կազմակերպությունների ու կոմիտեների միջնորդությամբ: Այս գործում Հայաստանի կառավարությանը մեծ օգնություն էր ցույց տալիս ՀԱԽ-ը, որը նավթամթերք էր գնում և ուղարկում Հայաստան: Սակայն Ադրբեջանը ամեն կերպ խոչընդոտում էր այդ աշխատանքները: Պատճառը ոչ միայն երկու հանրապետությունների միջև գոյություն ունեցող սահմանային անհամաձայնություններն էին ու ընդհանուր լարվածությունը, այլ նաև առևտրային պայմանագրի բացակայությունը: ՀՀ առևտրի ու արդյունաբերության նախարար Լ.

---

[20] ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 48, թ. 11:

[21] Նույն տեղում, գ. 65, թ. 13:

[22] Նույն տեղում:

Ղուլյանին ՀԱԽ-ի հղած հեռագրում ասվում էր. «Հայաստանի Հանրապետության կարիքների համար նախատեսված 40 վագոն նավթի ուղարկման հետաձգումը կապված է այն արգելքների հետ, որը հարուցվում է Ադրբեջանի կառավարության կողմից: Դա պայմանավորված է բացառապես Հայաստանի և Ադրբեջանի միջև առևտրական պայմանագրի բացակայությամբ»[23]:

Բաքվի փախստականներին աջակցելուց բացի, ՀԱԽ-ը այս շրջանում ձեռնամուխ եղավ նրանց վնասներին և կորուստներին վերաբերող խնդրի արծարծմանը: Այդ նպատակով նա դիմումներ էր հղում Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչին՝ փախստականներին սատարելու և նրանց հիմնահարցը համապատաս-խան մարմիններին ներկայացնելու խնդրանքով[24]:

ՀԱԽ-ը ձեռնարկեց հայերի կրած վնասները հաշվառելու և դաշնակիցներին ներկայացնելու գործին՝ ակնկալելով որոշակի փոխհատուցում: Բայց քանի որ հարցի լուծումը ձգձգվում էր, իսկ հայությունը շարունակում էր ապրել չքավորության մեջ ու զրկանքներ կրել, 1919 թ. փետրվարի 12-ի միջնորդությամբ Խորհուրդը դիմեց դաշնակից երկրների կազմած վերահսկիչ հանձնաժողովի նախագահ գնդապետ Լեմանին՝ խնդրելով մինչև խաղաղության կոնֆերանսը գոնե մասնակիորեն հատուցել վնասները[25]:

Բաքուն Ադրբեջանի մայրաքաղաք հռչակելուց հետո իշխա-նությունները բռնագրավել էին նաև հայերի մշակութային ու հասարակական շինությունները և մտադիր չէին դրանք վերադարձնել օրինական տերերին: Այսպես, Հայկական մշակութային միության շենքը զբաղեցրել էր Ադրբեջանի հաղորդակցության ու կապի նախարարությունը: Իր կարիքների համար շենքը ազատելու վերաբերյալ Ազգային խորհրդի խնդրանքին ի պատասխան՝ նախարարը հայտնել էր դրա անհնարինության մասին, փոխարենը՝ խոստացել ամեն կերպ օժանդակել հարմար շինություն ստանալու հարցում: ՀԱԽ-ի շենքը բռնագրավվեց զինվորական գերատեսչության կարիքների համար, և Խորհուրդը ժամանակավորապես հանգրվանեց Հայկական մարդասիրական միության դպրոցի դասարաններում: Կապված ուսումնական տարվա ու դպրոցում պարապմունքները սկսելու հետ՝ նա ստիպված պիտի լիներ ազատել այդ շինությունը: Իրենց նույնպես շենք հատկացնելու վերաբերյալ անգլիացիների ազատած բնակարանները բաշխող հանձնաժողովին ուղղած ՀԱԽ-ի դիմումը այդպես էլ պատասխան չստացավ:

Իսկ Ադրբեջանում հայության նկատմամբ ձևավորված թշնամական վերաբերմունքը, անշուշտ, մեծ անհանգստություն էր առաջացնում Բաքվի հայության ղեկավար մարմնում, և ՀԱԽ-ը սպասվող բռնությունները

---

[23] Նույն տեղում, ֆ. 278, ց. 1, գ. 51, թ. 26, ֆ. 199, ց. 1, գ. 51, թ. 2:

[24] Նույն տեղում, ֆ. 223, ց. 1, գ. 81, թ. 33:

[25] Նույն տեղում, ֆ. 223 ց. 1, գ. 65, թ. 26:

կանխելու նպատակով թակում էր պետական հիմնարկների դռները, խնդիրը բարձրաձայնում Ադրբեջանի ղեկավարության մոտ: Այսպես, Բաքվում տիրող խուճապային տրամադրությունների և մասնավորապես Շուշի-Եվլախ գծի վրա կատարվող սպանությունների հարցով Ազգային խորհուրդը դիմեց վարչապետ Ն. Ուսուբբեկովին: Բայց՝ անարդյունք:

Ադրբեջանի խորհրդայնացմանը հաջորդեցին ազգային կառույցների գործունեության կասեցումն ու հայտնի գործիչների ձերբակալությունները: Ձերբակալվեցին նաև Հայոց ազգային խորհրդի բոլոր անդամները, Ադրբեջանի ամբողջ պառլամենտը, այդ թվում նաև հայկական ֆրակցիան և շատ ուրիշ հայտնի գործիչներ[26]: Ձերբակալվածների մեջ էր նաև ՀԱԽ-ի նախագահ, դաշնակցական Տեր-Միքայելյանը[27]:

Այսպիսով, Հայոց ազգային խորհուրդը ոչ միայն Բաքվի, այլև իրավամբ Ադրբեջանի հայության պաշտպանն էր, կարևոր դեր էր խաղում նրա հասարակական-քաղաքական կյանքում, իրականացնում պետական-քաղաքական գործառույթներ:

БАКИНСКИЙ АРМЯНСКИЙ НАЦИОНАЛЬНЫЙ СОВЕТ–ЗАЩИТНИК АРМЯН АЗЕРБАЙДЖАНА
(май 1918 г. - май 1920 г.)

ГУЛЯН Ю. В

Резюме

Бакинский Армянский Национальный совет по праву являлся органом, защищавшим не только бакинских армян, но и всех армян, живших на территории Азербайджана. Играя важную роль в общественно-политической жизни армян Азербайджана, Совет фактически осуществлял государственно-политические функции. После захвата турками Баку деятельность Национального совета была приостанов-лена. После вступления английских войск в Баку Бакинский Армянский Национальный совет возобновил свою де-ятельность. Совет занимался вопросами по оказанию помощи армянским беженцам, размещению беженцев в Баку и других городах, областях и районах Азербайджана, где армянское население составляло большинство. В

---

[26] **Վրացյան Ս.,** *Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993, էջ 472:*

[27] *Նույն տեղում:*

сферу его деятельности входила и организация материальной, медицинской и прочей помощи.

Национальный совет вел работы и по освобождению армянских пленных.

Из-за отсутствия материальных средств Бакинский Армянский Национальный совет не всегда мог предоставить материальную помощь армянам из других областей Азербайджана.

После установления советской власти в Азербайджане деятельность структур Национального совета была приостановлена, а ее члены – арестованы.

THE ARMENIAN NATIONAL COUNCIL IN BAKU AS A DEFENDER OF ARMENIANS IN AZERBAIJAN (may 1918 - may 1920)

YU. GHULYAN

Abstract

The Armenian National Council in Baku indeed was the defending body of not only Baku but also the Armenians in Azerbaijan. It played an important role in the social-political life of Azerbaijan's Armenians, by performing state political functions.

After the occupation of Baku by Turks, the activities of the National Council were terminated.

After the English troops entered Baku, the Armenian National Council of Baku resumed its activities. The latter undertook a job to organize assistance to Armenian immigrants, especially in placing Armenian immigrants in Baku and provinces of Azerbaijan inhabited by Armenians, providing them with everything possible: financial, medical, and other assistance. The National Council also assumed the responsibility to return the Armenian prisoners.

The absence of financial means was the reason why the Armenian National Council of Baku did not always have the opportunity to provide financial aid to the Armenians in provinces.

With Azerbaijan's sovietization, the activities of the National Council were terminated, and its members were arrested.